«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հավելված
Վանաձորի Հ. Թումանյանի անվան
պետական համալսարանի
ռեկտորի 30.05.2016 թիվ 346 Ա/Կ հրամանի

ԿԱՐԳ

ՎԱՆԱՁՈՐԻ Հ.ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐՈՎ ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ

Ընդունված է ՎՊՀ-ի գիտխորհրդի կողմից

Արձանագրություն թիվ 5 26.05.2016թ.

Փոփոխվել է՝

Արձանագրություն թիվ 5 31.05.2018թ.

Արձանագրությունթիվ 1 25.02.2021թ.

Առ 17.03.2021թ.փոփոխություններով

Վանաձոր

2016թ.

I. Ընդհանուր դրույթներ

1. «Վանաձորի Հ. Թումանյանի անվան համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) բակալավրիատի և մագիստրատուրայի ուսանողների կուրսային աշխատանքների կազմակերպման, կատարման և գնահատման կարգը (այսուհետ՝Կարգ) մշակված է համաձայն Համալսարանի կանոնադրության և «Բալային-ռեյթինգային համակարգով ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման», «Ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման» կանոնակարգերի:

2. Կուրսային աշխատանքը ուսումնահետազոտական աշխատանքի ձևերից մեկն է և պարտադիր է բոլոր ուսանողների համար:

3. Կուրսային աշխատանքների քանակը որոշվում է տվյալ մասնագիտության ուսումնական պլանով, ըստ որի պետք է նախատեսել 1-3 կուրսային աշխատանք՝

- ընդհանուր մասնագիտական դասընթացներից,
- մասնագիտացման դասընթացներից:

4. Կուրսային աշխատանքի կատարման նպատակն է.

- ուսանողների գիտելիքների և մասնագիտական կարողությունների ամրագրում, խորացում և կատարելագործում,
- ինքնուրույն ուսումնական և գիտահետազոտական աշխատանքներ կատարելու ունակությունների ձևավորում,
- տեղեկատվության որոնման ժամանակակից տեխնոլոգիաների, տեղեկատվական նյութերի մշակման, վերլուծության և օգտագործման կարողությունների և հմտությունների ձևավորում,
- անցկացված հետազոտությունների արդյունքների վերլուծության և մեկնաբանման, ստացված արդյունքների հիման վրա հետևությունների և առաջարկների ձևակերպման կարողությունների ձևավորում:

II. Կուրսային աշխատանքների թեմատիկայի ընտրության, հաստատման ընթացակարգը և ժամկետները

5. Կուրսային աշխատանքների թեմատիկան պետք է համապատասխանի տվյալ մասնագիտության պետական կրթական չափորոշիչով սահմանված պահանջներին, գիտության տվյալ ճյուղի զարգացման արդիական մակարդակին և ընդգրկի տվյալ դասընթացի ողջ ծրագիրը:

6. Կուրսային աշխատանքների թեմաների վերնագրերը պետք է ձևակերպվեն հստակ և հակիրճ ձևով:

Կուրսային աշխատանքների թեմաների քանակը պետք է լինի տվյալ կուրսի ուսանողների քանակի առնվազը կրկնակին:

7. Ֆակուլտետը պարտավոր է կիսամյակի 1-ին շաբաթվա ընթացքում տեղեկացնել ուսանողներին ուսումնական պլանի այն դասընթացների մասին, որոնցից նախատեսված է կուրսային աշխատանքների կատարում:

8. Համալսարանի համապատասխան ամբիոնը ուսանողներին է ներկայացնում իր կողմից հաստատված կուրսային աշխատանքների թեմաների ցանկը:

Կուրսային աշխատանքների թեմաները կարող են փոփոխվել և լրացվել ամեն տարի՝ հաշվի

9. Ուսանողներն իրավունք ունեն ներկայացված ցանկից ընտրելու իրենց հետաքրքրող թեման՝ խորհրդակցելով կուրսային աշխատանքի ղեկավարի հետ, որից հետո կուրսային աշխատանքի թեման հաստատվում է համապատասխան ամբիոնում:

Բացառիկ դեպքերում (արդիականություն, հետազոտությունների շարունակականություն և այլն) ուսանողները կարող են առաջադրել թեմաներ. լուրջ հիմնավորվածության դեպքում ամբիոնը կարող է քննարկել և մտցնել հաստատված ցուցակի մեջ:

10. Ամբիոնը ֆակուլտետի ղեկանին ներկայացնում է քաղվածք ամբիոնի նիստի արձանագրությունից՝ կուրսային աշխատանքների թեմաների և դրանց ղեկավարների հաստատման մասին՝

-առկա ուսուցման համակարգի ուսանողների համար՝ սեպտեմբեր ամսվա երկրորդ տասնօրյակում (1-ին կիսամյակ) և փետրվար ամսվա երկրորդ տասնօրյակում (2-րդ կիսամյակ),

- հեռակա ուսուցման համակարգի ուսանողների համար՝ ուսումնական պլանով կուրսային աշխատանքը նախատեսված կիսամյակի դասընթացների առաջին շաբաթվա վերջում:

11. Կուրսային աշխատանքների թեմաները և գիտական ղեկավարները հաստատվում են ֆակուլտետի գիտամեթոդական խորհրդի նիստով:

12. Կուրսային աշխատանքի ընտրված թեմայի փոփոխությունը թույլատրվում է բացառիկ դեպքերում՝ ուսանողի հիմնավորված բացատրագրի հիման վրա՝ ղեկավարի և ամբիոնի վարիչի համաձայնությամբ՝ գիտամեթոդական խորհրդի նիստի որոշմամբ:

13. Բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման համակարգի ուսանողների կուրսային աշխատանքները ներկայացվում են համապատասխան ամբիոն, որտեղ հատուկ մատյանում կատարվում է դրանց գրանցումը և հաշվառումը:

14. Ուսանողի կողմից կուրսային աշխատանքի թեմայի ընտրությունը կատարվում է նրա գրավոր դիմումի հիման վրա (հավելված 1), որը կցվում է կուրսային աշխատանքին վերաբերող հրամանին:

III. Կուրսային աշխատանքների կատարման, ստուգման, գրախոսության և պաշտպանության ընթացակարգը

15. Բակալավրիատում կուրսային աշխատանքները կատարվում են համաձայն ուսումնական պլանների՝ 5-րդ-7-րդ կիսամյակներում (առկա ուսուցման համակարգ) և 6-րդ-10-րդ կիսամյակներում (հեռակա ուսուցման համակարգ):

Մագիստրատուրայում կուրսային աշխատանքները կատարվում են 2-րդ կիսամյակում (առկա, հեռակա ուսուցման համակարգեր):

16. Ուսանողների կողմից կուրսային աշխատանքների կատարման վերահսկողությունն իրականացվում է կուրսային աշխատանքների ղեկավարների կողմից: Այդ նպատակով ամբիոնի կողմից մշակվում է կուրսային աշխատանքների կատարման ժամանակացույց, որը պարունակում է տեղեկություններ ուսանողների (կուրս, խումբ), կուրսային աշխատանքների թեմաների, դրանց հանձնման և պաշտպանության ժամկետների, կուրսային աշխատանքների ղեկավարների մասին:

17. Կուրսային աշխատանքի կատարման ժամանակահատվածի համար մշակվում է ուսանողի աշխատանքի անհատական պլան՝ աշխատանքի կատարման փուլերի և ժամկետների նշումով: Պլանը հաստատվում է կուրսային աշխատանքի ղեկավարի կողմից:

18. Կուրսային աշխատանքի կատարման ընթացքում ուսանողը պարտավոր է ղեկավարի հետ համաձայնեցված ժամկետներում ներկայացնել նրան հաշվետվություն՝ աշխատանքի առանձին փուլերի կատարման և ստացած արդյունքների քննարկման նպատակով:

19. Ամբիոնում գրանցելուց հետո կուրսային աշխատանքը գրախոսականի ձևաթերթի (հավելված 4) հետ (2 օրինակից) հանձնվում է ղեկավարին՝ պաշտպանությունից ոչ ուշ, քան 2 շաբաթ առաջ:

20. Ղեկավարը պարտավոր է ստուգել կուրսային աշխատանքը, գրախոսել այն՝ ներկայացնելով աշխատանքը պաշտպանության թույլատրելու (կամ չթույլատրելու) իր որոշումը: Ուսանողին վերադարձվում է ստուգված աշխատանքը գրախոսականի հետ միասին՝ ոչ ուշ, քան պաշտպանությունից մեկ շաբաթ առաջ:

21. Գրախոսման ժամանակ հաշվի է առնվում.

- աշխատանքի բովանդակության համապատասխանությունը ուսանողի ընտրած թեմային,
- տվյալ թեմային վերաբերող տեսական և գործնական նյութերի օգտագործման և մշակման մակարդակը,
- ուսանողի՝ գիտական մեթոդների և տերմինաբանության իմացության մակարդակը,
- կուրսային աշխատանքի պլանով նախանշված խնդիրների լուծման խորությունը, կատարած աշխատանքի առավելությունները և թերությունները,
- եզրակացությունների հիմնավորումը և փաստարկումը, ուսանողի դատողությունների ինքնուրույնությունը,
- աշխատանքի ձևակերպման պահանջների պահպանումը:

Գրախոսականը պետք է պարունակի նաև առաջարկներ՝ նկատված թերությունները վերացնելու ուղղությամբ և պաշտպանությունը թույլատելու (չթույլատրելու) հակիրճ հիմնավորմամբ:

22. Ուսանողը զեկուցում է պաշտպանության երաշխավորված աշխատանքը ամբիոնի նիստին՝ աշխատանքի ղեկավարի ներկայությամբ:

23. Ուսանողին ելույթի համար տրվում է մինչև 10 րոպե ժամանակ:

Ուսանողի ելույթը պետք է լինի հստակ և հակիրճ, պարունակի հստակ արտահայտված տեղեկություններ աշխատանքի թեմայի, դրա արդիականության հիմնավորման, ստացած արդյունքների և եզրակացությունների մասին:

24. Կուրսային աշխատանքները գնահատվում են 100-միավորանոց սանդղակով՝ համաձայն աղյուսակ 1-ում ներկայացված չափանիշների:

<u>Աղյուսակ 1.</u> **Կուրսային աշխատանքի բաղադրիչները և հատկացվող միավորները (ըստ 100-միավորանոց սանդղակի)**

h/h	Գնահատման բաղադրիչները	Հատկացվող միավորները
1	**Կուրսային աշխատանքի ձևակերպում (0-50)**	
1.1.	Կուրսային աշխատանքի կատարման ինքնուրույնությունը, Ուսանողի կատարած դատողությունների, եզրակացությունների հիմնավորումը և փաստարկումը	0-10
1.2.	Աշխատանքի թեմային վերաբերող տեսական և գործնական նյութերի օգտագործման և մշակման մակարդակը	0-10
1.3.	Ուսանողի կողմից գրականության և այլ փաստական նյութերի կիրառությունը և կիրառման հմտությունը	0-10
1.4.	Կուրսային աշխատանքի բովանդակության համապատասխանությունը թեմային	0-10

1.5.	Կուրսային աշխատանքի ձևակերպման համապատասխանությունը սույն կարգի VII բաժնում նշված չափանիշներին	0-10
2.	**Պաշտպանություն (0-50 միավոր)**	
2.1.	Ղեկավարի կարծիքը	0-10
2.2.	Աշխատանքի բովանդակության ներկայացման կարողությունը	0-10
2.3.	Ուսանողի կողմից սեփական տեսակետը պաշտպանելու կարողությունը	0-10
2.4.	Ուսանողի կողմից աշխատանքը ներկայացնելու հմտությունը և միջոցների կիրառությունը (գրաֆիկներ, ցուցադրական միջոցներ, սլայդներ և այլն)	0-10
2.5.	Ուսանողի խոսքի կուլտուրան	0-10

25. Վերջնական գնահատականը (100-միավորանոց սանդղակով) գրանցվում է քննական տեղեկագրում, ուսանողի ստուգարքային գրքույկում, ինչպես նաև կուրսային աշխատանքի տիտղոսաթերթի վրա, և հավաստվում է ղեկավարի ստորագրությամբ:

26. Կուրսային աշխատանքների լրիվ անվանումները գնահատականի հետ միասին գրանցվում են դիպլոմի հավելվածում:

27. Պաշտպանության չթույլատրված կամ բացասական գնահատականի արժանացած կուրսային աշխատանքը համարվում է ակադեմիական պարտք:

28. Կուրսային աշխատանքից ակադեմիական պարտքը մարվում է քննությունների ակադեմիական պարտքերի մարմանը տրամադրված ժամանակահատվածում:

IV. Կուրսային աշխատանքի ղեկավարումը

29. Կուրսային աշխատանքի ղեկավարը նշանակվում է ամբիոնի փորձառու աշխատակիցներից, որոնք ունեն ոչ պակաս քան 3 տարվա գիտամանկավարժական (գիտահետազոտական) աշխատանքի փորձ:

30. Ղեկավարի գործառույթներն են.

- գործնական օգնության ցուցաբերում ուսանողներին՝ կուրսային աշխատանքի թեմայի ընտրության և պլանի մշակման գործում,
- աշխատանքի նպատակի, խնդիրների, հետազոտության առարկայի գրագետ և հստակ ձևակերպումը,
- աջակցություն՝ հետազոտության մեթոդիկայի ընտրության գործում,
- օգնություն՝ գրականության և մեթոդական նյութերի ընտրության գործում,
- պարբերաբար վերահսկողություն՝ կուրսային աշխատանքի կատարման ընթացքում,
- կուրսային աշխատանքի գրախոսություն և գնահատում՝ համաձայն ներկայացվող պահանջների,
- ամբիոնին և դեկանատին տեղյակ պահելը՝ ուսանողի կողմից աշխատանքի ներկայացման ժամկետների խախտման մասին:

31. Անհրաժեշտության դեպքում կուրսային աշխատանքի ղեկավարի փոխարինման հարցը որոշում է ֆակուլտետի գիտամեթոդական խորհուրդը՝ ամբիոնի վարիչի առաջարկությամբ:

32. Եթե կուրսային աշխատանքը կրում է միջառարկայական բնույթ, ապա նշանակվում են խորհրդատուներ՝ աշխատանքի թեմատիկային համապատասխանող այլ ամբիոնների աշխատակիցներից:

V. Ուսանողի պարտականությունները

33. Կուրսային աշխատանքը կատարելիս ուսանողը պարտավոր է.

- պահպանել աշխատանքի տարբեր փուլերի կատարման ժամկետները՝ համաձայն անհատական պլանի և դեկանատի նշանակած ժամկետների,
- կատարել ղեկավարի առաջադրանքները, ժամանակին ներկայանալ խորհրդատվությունների, հաշվետվությունների՝ կատարած աշխատանքների մասին,
- ցուցաբերել ինքնուրույնություն և ակտիվություն կուրսային աշխատանքների կատարման ընթացքում (ընտրել և վերլուծել թեմային վերաբերող գրականությունը, կատարել աշխատանքի հետազոտական մասը, վերլուծել և մեկնաբանել ստացած արդյունքները),
- պահպանել մասնագիտական էթիկայի նորմերը և սկզբունքները,
- աշխատանքը ժամանակին ներկայացնել պաշտպանության:

VI. Կուրսային աշխատանքի կատարման փուլերը

34. Կուրսային աշխատանքների կատարման փոխկապակցված փուլերը ներկայացված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3. Կուրսային աշխատանքի կատարման փուլերը և ժամկետները

հ/հ	Կուրսային աշխատանքի կատարման փուլերը	Կատարման ժամկետները				Վերահսկողության ձևը
		Առկա		Հեռակա		
		Կենտ կիսամյակ	Զույգ կիսամյակ	Կենտ կիսամյակ	Զույգ կիսամյակ	
1.	1.1. Կուրսային աշխատանքի թեմայի ներկայացում ամբիոնների կողմից 1.2. Կուրսային աշխատանքի թեմայի մասին ուսանողի գրավոր դիմումի ներկայացում	Մինչև սեպտեմբերի 10-ը Մինչև սեպտեմբերի 15-ը	Մինչև փետրվարի 15-ը Մինչև փետրվարի 20-ը	Մինչև հունվարի 15-ը Մինչև հունվարի 20-ը	Մինչև հունիսի 10-ը Մինչև հունիսի 15-ը	Ֆակուլտետի որոշման կայացում՝ կուրսային աշխատանքների թեմաների հաստատման մասին
1.	Կուրսային աշխատանքի թեմայի ընտրություն և հաստատում	Մինչև սեպտեմբերի 20-ը	Մինչև փետրվարի 25-ը	Մինչև հունվարի 20-ը	Մինչև հունիսի 20-ը	Ֆակուլտետի որոշման կայացում՝ կուրսային աշխատանքների թեմաների հաստատման մասին
2.	Գիտական ղեկավարի նշանակում	Մինչև սեպտեմբերի 25-ը	Մինչև մարտի 1-ը	Մինչև հունվարի 25-ը	Մինչև հունիսի 25-ը	Ֆակուլտետային հրահանգ կուրսային աշխատանքների ղեկավարների

						նշանակման մասին
3.	Կուրսային աշխատանքի կատարման պլանավորում	Մինչև սեպտեմբերի 30-ը	Մինչև մարտի 5-ը	Մինչև հունվարի 30-ը	Մինչև հունիսի 30-ը	Կուրսային աշխատանքի պլանի հաստատում կուրսային աշխատանքի ղեկավարի կողմից
4.	Գրական տվյալների որոնում կուրսային աշխատանքի թեմայով	Մինչև հոկտեմբերի 15-ը	Մինչև մարտի 20-ը	Մինչև փետրվարի 15-ը	Մինչև հուլիսի 5-ը	Հաշվետվություն կուրսային աշխատանքի ղեկավարին
5.	Տեսական նյութերի, գրական տվյալների վերլուծություն և ամփոփում, վերլուծության սնազիր տարբերակի ներկայացում	Մինչև հոկտեմբերի 30-ը	Մինչև մարտի 30-ը	Մինչև փետրվարի 25-ը	Մինչև օգոստոսի 31-ը	Հաշվետվություն կուրսային աշխատանքի ղեկավարին
6.	Փորձարարական աշխատանքների կատարում	Նոյեմբեր ամսվա ընթացքում	Ապրիլ ամսվա ընթացքում	Մինչև մարտի 15-ը	Մինչև սեպտեմբերի 25-ը	Հաշվետվություն կուրսային աշխատանքի ղեկավարին
7.	Հիմնական եզրակացությունների ձևակերպում, աշխատանքի ձևակերպում և ներկայացում ղեկավարին	Մինչև դեկտեմբերի 10-ը	Մինչև մայիսի 10-ը	Մինչև մարտի 25-ը	Մինչև հոկտեմբերի 10-ը	Հաշվետվություն կուրսային աշխատանքի ղեկավարին
8.	Գիտական ղեկավարի նշած թերությունների ուղղում	Մինչև դեկտեմբերի 15-ը	Մինչև մայիսի 15-ը	Մինչև մարտի 30-ը	Մինչև հոկտեմբերի 15-ը	Կուրսային աշխատանքի պաշտպանության թույլտվություն
9.	Կուրսային աշխատանքի վերջնական տարբերակի ձևակերպում, ներկայացում պաշտպանության	Մինչև դեկտեմբերի 20-ը	Մինչև մայիսի 20-ը	Մինչև ապրիլի 20-ը	Մինչև հոկտեմբերի 25-ը	Կուրսային աշխատանքի պաշտպանության թույլտվություն

10.	Կուրսային աշխատանքի պաշտպանութ-յուն	Քննաշրջա-նի ընթացքում	Քննաշըր-ջանի ընթաց-քում	Քննաշըր-ջանի ընթաց-քում	Քննաբր-ջանի ընթաց-քում	Պաշտպանության անցկացում

VII. Կուրսային աշխատանքների ձևակերպմանը ներկայացվող պահանջները

35. Բակալավրիատում և մագիստրատուրայում կուրսային աշխատանքները ներկայացվում են տպագիր՝ A4 ֆորմատի սպիտակ թղթի մեկ էջի վրա: Էջի լուսանցքներն են. ձախից- 20 մմ, աջից- 10 մմ, վերևից- 20 մմ, ներքևից- 25 մմ, միջակայքը՝ 1,5, տառաչափը՝ 12, տառատեսակը՝ Arial Armenian (հայերեն), Arial LatRus և Times New Roman (ռուսերեն և այլ օտար լեզուների դեպքում): Ծավալը՝

- բակալավրիատում՝ 20-25 էջ,
- մագիստրատուրայում՝ 30-35 էջ:

Բնական գիտությունների բնագավառի մասնագիտությունների կուրսային աշխատանքների ծավալը կարող է կազմել.

- բակալավրիատում՝ 20-25 էջ,
- մագիստրատուրայում՝ 25-30 էջ:

36. Կուրսային աշխատանքը պետք է պարունակի կազմ, տիտղոսաթերթ (հավելված 2), բովանդակություն (հավելված 3), ներածություն, հիմնական մաս (գլուխ, բաժին, ենթաբաժին), ամփոփում, գրականության ցուցակ և հավելվածներ (անհրաժեշտության դեպքում):

37. Տիտղոսաթերթը պետք է պարունակի հետևյալ տեղեկություններ.

- բուհի, ֆակուլտետի, ամբիոնի, մասնագիտության անվանումները,
- կուրսային աշխատանքի թեմայի անվանումը,
- ուսանողի անունը, ազգանունը և ստորագրությունը,
- կուրսային աշխատանքի ղեկավարի անունը, հայրանունը, ազգանունը և պաշտոնը,
- ղեկավարի համաձայնությունը (ստորագրությամբ)՝ աշխատանքը պաշտպանության ներկայացնելու մասին,
- պաշտպանության ամսաթիվը, գնահատականը (թվերով և տառերով), ղեկավարի ստորագրությունը,
- քաղաքը, աշխատանքի կատարման տարին:

38. Կուրսային աշխատանքի բովանդակությունում նշվում է նրա կառուցվածքը. ներածություն, հիմնական մաս (բաղկացած բաժիններից և ենթաբաժիններից, եզրակացություն, գրականության ցուցակ, հավելվածներ)՝ յուրաքանչյուր մասի էջերի նշմամբ:

Ներածությունը պետք է պարունակի.

- աշխատանքի թեմայի արդիականության հիմնավորումը, նպատակը և խնդիրները,
- հետազոտության մեթոդների և առարկայի նկարագրությունը,
- տեղեկություններ աշխատանքի կառուցվածքի մասին:

39. Աշխատանքի հիմնական մասը, որպես կանոն, բաժանվում է 2 գլուխների՝ տեսական և փորձարարական, որոնք, իրենց հերթին, կարող են պարունակել ենթաբաժիններ: Յուրաքանչյուր գլուխ պետք է ավարտվի հեղինակի եզրակացություններով:

40. Տեսական հետազոտությունները պարունակում են գրականության տվյալներ՝ պատմական ակնարկով, տպագրված աշխատանքների վերլուծությամբ, հիմնահարցի ներկա վիճակով: Տեքստը պետք է ցույց տա.

- հեղինակի ծանոթ լինելը տվյալ թեմային վերաբերող հիմնական գրականությանը,
- հիմնախնդիրը ձևակերպելու և լուծման ուղիները նախանշելու կարողությունը,
- ներկայացվող նյութերի էությունը հաջորդաբար շարադրելու կարողությունը,
- համապատասխան տերմինաբանությանը տիրապետելը,
- լեզվական գրագիտությունը, գիտական շարադրման ոճի կարողությունը:

41. Փորձարարական մասի առաջին ենթաբաժնում շարադրվում են հետազոտության ընթացքում օգտագործված մեթոդիկաները, դրանց նկարագրությունը՝ գրական աղբյուրների նշումով:

42. Փորձարարական մասի երկրորդ ենթաբաժնում շարադրվում են հետազոտության արդյունքները և դրանց քննարկումը, ստացած տվյալները՝ աղյուսակների, սխեմաների, նկարների տեսքով:

43. Աշխատանքի ամփոփումը պետք է պարունակի անցկացված հետազոտությունների արդյունքները և դրանց հիման վրա կատարված եզրակացությունները՝ տվյալ հետազոտությունների անցկացման շարունակության անհրաժեշտության նշմամբ:

44. Գրականության ցուցակը պետք է համապատասխանի հավելված 4-ում բերված օրինակին:

45. Համարակալումը սկսվում է 3-րդ էջից (էջի համարը դրվում է էջի ներքևի կենտրոնում): Տիտղոսաթերթը (1-ին էջ) և բովանդակությունը (2-րդ էջ) չեն համարակալվում:

46. Հղումներն օգտագործված աղբյուրներին նշվում են նախադասությունների վերջում՝ քառակուսի փակագծերում, արաբական թվերով նշելով աղբյուրի հերթական համարը և էջը: Օրինակ՝ [2. էջ 105] (հավելված 5): Հղումները պետք է հաջորդաբար համարակալված լինեն: Աղյուսակային տվյալների համար, անհրաժեշտության դեպքում, պետք է նշվի այդ տվյալների չափման միավորը:

47. Տեքստում բերված նկարները պետք է ունենան հաջորդական համարակալում:

48. Կուրսային աշխատանքի յուրաքանչյուր բաժինը սկսվում է նոր էջից: Վերնագիրը գրվում է մուգ տառատեսակով:

49. Աղյուսակները և նկարները կարող են տեղադրվել անմիջականորեն տեքստում, ինչպես նաև հավելվածներում և ունենան դրանց բովանդակությունն արտահայտող վերնագրեր:

50. Հավելվածները ձևավորվում են որպես աշխատանքի շարունակություն: Յուրաքանչյուր հավելված սկսվում է նոր էջից, որի աջ մասում գրվում է «Հավելված» բառը, հերթական համարը և վերնագիրը:

VIII. Կուրսային աշխատանքի պաշտպանության անցկացումը

51. Կուրսային աշխատանքի պաշտպանությանը թույլատրվում է մասնակցել այն ուսանողներին, որոնք հաստատված ժամանակահատվածում ղեկավարին են ներկայացրել սույն Կարգի ապահանջներին համապատասխանող և ղեկավարի դրական կարծիքն ունեցող կուրսային աշխատանք:

52. Համապատասխան փաստաթղթերով հավաստված հարգելի պատճառներով (հիվանդություն կամ այլ հարգելի պատճառ) կուրսային աշխատանքի պաշտպանությանը չներկայանալու դեպքում ֆակուլտետի դեկանը համապատասխան ամբիոնի վարիչի հետ համաձայնեցնելուց հետո նշանակում է աշխատանքի ներկայացման և պաշտպանության նոր ժամկետ:

53. Գրագողություն (պլագիատ) համարվող աշխատանքը պաշտպանության չի թույլատրվում: Այս դեպքում ուսանողը պարտավոր է լրամշակել այն, կամ ղեկավարի հետ համաձայնեցնելով՝ ընտրել նոր թեմա և ինքնուրույն կատարել այն:

54. Կուրսային աշխատանքների պաշտպանությունը կազմակերպվում է ըստ տվյալ կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցի: Ուսանողը ելույթ է ունենում դեկանի կարգադրությամբ կազմավորված հատուկ հանձնաժողովի առջև, իր ղեկավարի ներկայությամբ:
Ղեկավարի բացակայության դեպքում պաշտպանությունն անցկացվում է ղեկավարի կողմից գրավոր գրախոսականի ներկայացման պայմանով:
55. Դեկանատը որոշում է հանձնաժողովի կազմը, նրա աշխատանքի կարգը, և տեղեկացնում է ուսանողներին, կուրսային աշխատանքների ղեկավարներին և հանձնաժողովի նախագահներին ոչ ուշ, քան պաշտպանությունից մեկ շաբաթ առաջ:
56. Ուսանողը պաշտպանության ժամանակ պետք է պատրաստ լինի.
- ներկայացնելու աշխատանքի հիմնական բովանդակությունը,
- բացատրելու աշխատանքի առանձին կարևոր խնդիրները,
- պատասխանելու աշխատանքին վերաբերող հարցերին:
57. Կուրսային աշխատանքի պաշտպանությունը պետք է կատարվի ըստ հաստատված ժամանակացույցի.
առկա ուսուցման համակարգում՝ ստուգարքներին հատկացված շաբաթում,
հեռակա ուսուցման համակարգում՝ ուսումնաքննական ժամանակահատվածում, 2012թ ներդրված հեռակա ուսուցման համակարգի ուսանողների համար՝ քննական ժամանակահատվածում:
58. Կուրսային աշխատանքի պաշտպանությունից ստացած գնահատականները հայտարարվում են անմիջապես պաշտպանությունից հետո, մինչև տեղեկագիրը լրացնելը: Ստացած գնահատականից ուսանողի անհամաձայնության դեպքում կազմակերպվում է կրկնակի պաշտպանություն՝ նույն նիստում, որի մասին կազմվում է համապատասխան արձանագրություն: Կրկնակի պաշտպանության արդյունքում ստացած գնահատականը գրանցվում է տեղեկագրում:
59. Նշանակված ժամկետներում կուրսային աշխատանքը չներկայացրած, ոչ հարգելի պատճառներով պաշտպանությանը չներկայացած կամ պաշտպանության ժամանակ «անբավարար» գնահատական ստացած ուսանողը համարվում է ակադեմիական պարտք ունեցող:
60. Ակադեմիական պարտքը վերահանձնելու համար ուսանողը պարտավոր է հաստատված ժամկետներում ներկայացնել կուրսային աշխատանքը ղեկավարին և պաշտպանել այն հանձնաժողովի ներկայությամբ:
61. Կուրսային աշխատանքների կատարման և պաշտպանության արդյունքները քննարկվում են համապատասխան ամբիոնների նիստերին, կամ, անհրաժեշտության դեպքում՝ ֆակուլտետի ուսումնամեթոդական խորհրդի խորհրդի նիստին:

IX. Կուրսային աշխատանքների պահպանման ժամկետները

62. Կուրսային աշխատանքները պահվում են համապատասխան ամբիոններում 2 (երկու) տարի: Պահպանման ժամկետը լրանալուց հետո աշխատանքները ակտավորվում և դուրս են գրվում:

Հավելված 1.

Կուրսային աշխատանքի թեմայի ընտրության դիմում

_____ ամբիոնի վարիչ
պր. (տիկ.)_____
բակալավրի (մագիստրատուրայի)
կրթական ծրագրի
_____ մասնագիտության
_____ կուրսի ուսանող
_____-ից

ԴԻՄՈՒՄ

Խնդրում եմ թույլ տալ կատարել կուրսային աշխատանք _____ *առարկայից «*_____*» թեմայով:*

Դիմող՝ _____ _____
Ստորագրություն *Անուն, ազգանուն*

«_____»_____201 թ.

ք Վանաձոր

Հավելված 2.

Կուրսային աշխատանքի տիտղոսաթերթ

ՀՀ Կրթության և գիտության նախարարություն

«Վանաձորի Հ.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ

_____

(ֆակուլտետի անվանումը)

_____

(մասնագիտության անվանումը)

_____

(ամբիոնի անվանումը)

ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

_____առարկայից

_____թեմայով

Կատարող՝ Բակալավրիատի (Մագիստրատուրայի)
….. կուրսի ուսանող

_____ _____

(ուսանողի անուն, ազգանուն) *(ստորագր.)*

Ղեկավար՝ _____

(ազգանուն, անուն, հայրանուն, գիտական աստիճան, կոչում)

Նշում՝ պաշտպանությունը թույլատրելու (չթույլատրելու) մասին _____

«_____» _____ 200….թ. _____

(ղեկավարի ստորագրությունը)

Վանաձոր 201…թ.

Բովանդակություն

Էջ

Ներածություն.....3

1. Գլուխ 1-ի անվանումը..... 4

(բաժինների, ենթաբաժինների անվանումը).....4

2. Գլուխ 2-ի անվանումը.....15

(Բաժինների, ենթաբաժինների անվանումը).....15

Ամփոփում.....19

Գրականության ցուցակ..... 20

Հավելվածներ.....22

Հավելված 4

ՀՀ Կրթության և գիտության նախարարություն
«Վանաձորի Հովհ.Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ

Գրախոսական
Կուրսային աշխատանքի

Ֆակուլտետ_____
Մասնագիտություն_____
Կուրս_____(առկա, հեռակա)
Ուսանող_____
(անուն, ազգանուն)
Կուրսային աշխատանք_____առարկայից
_____թեմայով
Թույլատրված է պաշտպանության "___" _____201…թ.
Ղեկավար_____ _____
(անուն, ազգանուն)
(ստորագր.)

Պաշտպանության ժամկետը
"____" _____ 201… թ.

_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____
_____

Կուրսային աշխատանքի պաշտպանության գնահատականը _____

Ղեկավար՝_____ _____
(անուն, ազգանուն) (ստորագր.)

Հավելված 5

Գրականության ցուցակի ձևավորման օրինակ

Մեկհատորյա հրատարակում

- Карлович, И.А. Геоэкология//- М., Альма-Матер, 2005 – 190 էջ:

Օրենսդրական նյութեր

- ՀՀ Սահմանադրություն- Եր., Լույս, 2005- 25էջ.

Բազմահատոր հրատարակումներ

- Շիրվանզադե- Երկերի ժողովածու տասը հատորով: Հատոր տասներորդ// Երևան, 1962

Հոդվածներ

- Ա.Մելքոնյան - Միացյալ Հայաստանի հռչակագրի պատմական խորհուրդը// Հանրապետական գիտաժողովի նյութեր- Վանաձոր, 2009-էջ 4:

Ինտերնետային պաշարներ

- Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2011-15 թվականների պետական ծրագիր – www.parliament.am/law_docs/190711HO246havelvats.pdf
- Северин Е.С., Николаев А.Я. Биохимия. Краткий курс с упражнениями и задачами - http://www.webmedinfo.ru/bioximiya-kratkij-kurs-s-uprazhneniyami-zadachami-severin-e-s-nikolaev-a-ya.html.